Հավելված N 2
2025 թվականի հունվարի 15-ին կնքված
1032-11003/25-ՇՑ2 պայմանագրի

**ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N 3**

1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| Միջոցառման անվանում | «Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց ցերեկային խնամքի ծառայություններ» |
| Դրամաշնորհի N | Լոտ 8.1. Շիրակ - ցերեկային կենտրոն (Արթիկ, Գյումրի) |
| Դրամաշնորհատու կազմակերպություն | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն |
| Դրամաշնորհառու կազմակերպություն | «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպություն |
| Միջոցառման իրականացման ժամանակահատված | 01.01.2025-31.12.2025թթ. |
| Հաշվետու ժամանակահատված | 01.07.2025 -30.09.2025թթ. |
| Ներկայացման օր | 03.10.2025թ. |
| Հաշվետվության պատասխանատու<br>(անուն, ազգանուն, պաշտոն) | Սիրանուշ Սողոմոնյան<br>Թիմ լիդեր |

**2. Բովանդակային հաշվետվություն**

**2.1. Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 և թիվ 7 հավելվածներով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:**

Հաշվետու ժամանակահատվածի համար կատարման ենթակա գործողություններն են.

- սոցիալ-հոգեբանական օգնության և իրավաբանական խոհրդատվության տրամադրում,
- ազատ ժամանցի, խմբակների, զբաղվածության, մշակութային միջոցառումների և էքսկուրսիաների կազմակերպում,
- աշխատանքային/արտթերապիայի կազմակերպում,
- կենտրոնում սննդի կազմակերպում,
- բաղնիքի ծառայության տրամադրում,
- այլ ծառայությունների տրամադրում՝ ըստ անհրաժեշտության:

**2.2. Խնդրում ենք նկարագրել միջոցառման առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ միջոցառման խնդիրների/նպատակի իրականացմանը:**

- Սոցիալ-հոգեբանական օգնության տրամադրման շրջանակներում սոցիալական աշխատողը անհատական և խմբային աշխատանքների միջոցով հաշվետու ժամանակահատվածում աջակցություն է տրամադրել 40 շահառուի, իրականացվել է շահառուների կարիքների գնահատում և վերագնահատում: Հաշվետու ժամանակահատվածում շահառուների հիմնախնդիրների լուծման նպատակով իրականացվել է թվով 3 ուղղորդում, միջամտություն/միջնորդում այլ կառույցներ:
  Իրավաբանական խորհրդատվության շրջանակներում շահառուներին շարունակական տեղեկատվություն է տրամադրվել իրենց իրավունքների վերաբերյալ:
- Հաշվետու ժամանակահատվածում ցերեկային կենտրոնում կազմակերպվել է շահառուների ժամանցը՝ մանր եւ խոշոր մոտորիկայի, ուշադրության կենտրոնացման, հիշողության զարգացմանն ուղղված խաղերի, ակտիվացնող պարերի, կապերի ընդլայնման, հյուրերի ընդունելության, հեռուստադիտումների, ընթերցանության և դրանց համապատասխան քննարկումների իրականացման միջոցով:
  Կենտրոնում գործել է շահառուների հետաքրքրություններին համապատասխանող 7 խմբակ՝ գեղարվեստ, առողջ ապրելակերպ, հոգեբանական, մամուլի ընթերցում, հմուտ ձեռքեր, կյանքի հմտություններ՝ ինքնօգնություն, որոնց մասնակցել են 36 շահառուներ:
  Կազմակերպվել է թվով 8 մշակութային միջոցառում, որոնց մասնակցել է 40 շահառու: Իրականացված միջոցառումներն են՝ Էքսկուրսիա Սևանալիճ և Սևանավանք, Սուրբ Վարդավառ, Խաղողօրհնեք, Մարդասիրական օգնության միջազգային օր, Ամառային ճամբար (միջոցառում կենտրոնում), Սուրբ Խաչվերաց, Սահմանադրության օր, Խաղաղության միջազգային օր:
  Հաշվետու ժամանակահատվածում աշխատանքային/արտթերապիայի շրջանակներում կազմակերպվել է թվով 7 հանդիպում՝ ուղղված շահառուների խմբային աշխատանքում ինտեգրմանը, խմբային աշխատանքի հմտությունների ձեռքբերմանը, հաղորդակցման հմտությունների զարգացմանը, որին մասնակցել է թվով 16 շահառու:
- Կենտրոնում սննդի տրամադրման շրջանակներում յուրաքանչյուր օր սննդային 2 ընդմիջում է կազմակերպվել:

**Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)**

Հաշվետու ժամանակահատվածում համացանցում տեղադրվել են հետևյալ նյութերը.

- Ձեռքի աշխատանք՝ «Բալետի պարուհիներ» (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://surl.lu/yizaho),
- Խաղում ենք «Լոտո» (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://surl.li/irogid),
- ՀՀ Սահմանադրության օր (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://surl.lu/qqmutr),
- «Հմուտ ձեռքեր» խմբակի մասնակիցները պատրաստում են արևածաղիկներ (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://surl.li/ceercc, https://surl.li/qxnijr),
- Էքսկուրսիա դեպի՝ Սևանալիճ և Սևանավանք (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://surl.li/cyqtgt),
- Հանդիպում՝ նվիրված աշխարհահռչակ նկարչուհի Ֆրիդա Կալոյի ծննդյան 118-ամյակին (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://surl.li/ujaifd),
- «Բարեկամության ճամբար» (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://surl.li/ectzpl, https://surl.li/wqdtpp, https://surl.li/qrujin),
- Եռօրյա ճամբարի ամփոփում (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://surl.li/idobku),
- Պատրաստում ենք տիկնիկներ (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://surl.li/mppcse),
- Խաղաղության միջազգային օր (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://surl.li/vxtutp),
- Սիրված մանկավարժ Տիկին Ահդան ասմունքում է իր ստեղծագործությունը (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://surl.li/mgifja):

**2.3. Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են միջոցառման գործողությունների իրականացմանը:**

Արթիկի ցերեկային կենտրոնի ծառայություններից օգտվել ցանկացող անձինք ուղեգրման համար անհրաժեշտ բժշկական քարտի թմրաբանի և աղիքային խմբի վարակիչ (այդ թվում՝ մակաբուծային) հիվանդությունների հարուցիչների նկատմամբ հետազոտություն անցնելու համար պետք է այցելեն Գյումրու պոլիկլինիկա՝ Արթիկում համապատասխան հետազոտությունների բացակայության պատճառով, ինչը լրացուցիչ դժվարություններ է առաջացնում շահառուների համար, և բարդացնում ուղեգրման գործընթացը:

**2.4. Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):**

Հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված են հետևյալ գործողությունները.
- սոցիալ-հոգեբանական օգնության և իրավաբանական խորհրդատվության տրամադրում,
- ազատ ժամանցի, խմբակների, զբաղվածության, մշակութային միջոցառումների և էքսկուրսիաների կազմակերպում,
- աշխատանքային/արտթերապիայի կազմակերպում,
- կենտրոնում սննդի կազմակերպում,
- բաղնիքի ծառայության տրամադրում,
- այլ ծառայությունների տրամադրում՝ ըստ անհրաժեշտության:

**2.5. Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել միջոցառման աշխատանքային պլանով, բայց իրականացվել են միջոցառման նպատակին հասնելու համար:**

Ձևաչափ

«Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության ցերեկային խնամքի կենտրոնի շահառուներին մատուցված ծառայությունների վերաբերյալ

| h/h | Մատուցվող ծառայության անվանումը | Ծառայություն ստացած անձանց թիվը |
|---|---|---|
| 1. | հաշվետու ժամանակահատվածի՝ սկզբում/վերջում շահառուների թվաքանակը | 41/40 |
| 1.1 | այդ թվում՝ կին | 31 |
| 1.2 | այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձինք՝ 18-65 տարեկան | 1 |
| 1.2.1 | այդ թվում՝ կին | 0 |
| 1.2.2 | 18-40 տարեկան | 0 |
| 1.2.3 | 40-65 տարեկան | 1 |
| 1.3 | 65 տարեկանից բարձր | 39 |
| 2. | մեկանգամյա սննդի տրամադրում | - |
| 3. | Կարիքի գնահատում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 33 |
| 4. | Աշխատանքային/արտթերապիայի որոշակի տեսակների կազմակերպում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 16 |
| 5. | Խմբակների կազմակերպում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 36 |
| 5.1 | կյանքի հմտություններ (Ինքնօգնություն) | 16 |
| 5.2 | գեղարվեստ | 17 |
| 5.3 | առողջ ապրելակերպ | 21 |
| 5.4 | հոգեբանական | 23 |
| 5.5 | մամուլի ընթերցում | 16 |
| 5.6 | հմուտ ձեռքեր | 16 |
| 6 | Մշակութային միջոցառումների կազմակերպում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 40 |
| 6.1 | Այդ թվում՝ կենտրոնից դուրս | 11 |
| 7. | Այլ ծառայություն (նշել) | 0 |

Կազմակերպության ղեկավար ___*Երվանդ Մխիթարյան*___ «03» 10. 2025թ
(ստորագրություն, անուն,ազգանուն)